

Առաջին համաժողով



**Ս. ՍԱՀԱԿ ԵՒ Ս. ՄԵՍՐՈՊ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԵԿԵՂԵՑԻ**

*The Rev. Dr. Parez Metjian, Pastor*

**Ապրիլ 15, 1993**

Գերաշնորհ Խաժակ Եպս. Պարսամեան,  
Առաջնորդ Ամերիկահայոց Թեմին  
Նիւ Եորք, Ն. Ե.

Գերաշնորհ Սրբազան Հայր,

Ս. Սահակ Ս. Մեսրոպ Հայց. եկեղեցւոյ տարեկան անդամական ժողովը տեղի ունեցաւ, կիրակի, Մարտ 21ին, յետ Պատարագի, հոգեւոր հովիւին հովանաւորութեամբ:

Սոյն ժողովին 327 տրատու անդամներէն 87 տրատու անդամներ ներկայ էին: Ըստ մեր կանոնադրին վաւերական ժողով մըն էր:

Գաղտնի քուէարկութեամբ հետեւեալները ընտրուեցան ծխական խորհուրդի անդամ.-

- |                                 |                         |
|---------------------------------|-------------------------|
| Քարին Լումըն՝ 56 քուէ           | Անահիտ Մկրեան՝ 52 քուէ  |
| Ճօրճ Պօյանեան՝ 55 քուէ          | Ժօվեա Քիթանեան՝ 42քուէ  |
| Տօքտ. Ճէրլըլտ Վիլլմընզ՝ 53 քուէ | Շաքէ Տէրտէրեան՝ 35 քուէ |

Վերոյիշեալ թեկնածուները ձեզ կը ներկայացնենք առ ի վաւերացում:

Մեր տեղեկութեանց համաձայն, համայնքիս 1992 տարուայ Առաջնորդարանի տուրքը լրիւ վճարուած է:

Սպասելով ձեր պատասխանին, մնամ

**Մատչելով Ի համբոյր Ձերդ Ս. Աջոյն**

**Տօքտ. Բարի Քէնյ. Մէթեան**

*St. Sahag and St. Mesrob Armenian Church  
630 Clothier Road • Wynnewood, PA • 19096-2214  
Telephone: 215-642-4212 • Fax: 215-649-4892*